ԽՍՀՄ ԲԱՆԱԿԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՆ

Յուլիսի 22ին ՀՀ ՆԳ Նախարարի պաշտօնակատար Աշոտ Մանուչարեանը լրագրողների հետ ունեցած հերթական հանդիպման ժամանակ յայտարարեց, որ ադրբեջանական իշխանութիւնները, օգտուելով կենտրոնի զօրակցութիւնից, շարունակում է իրագործել հայերի տեղահանման հակամարդկային բռնի քաղաքականութիւնը: Դեսանտայինների կողմից յարձակումների է ենթարկուել Շահումեանի շրջանի Վերին Շէն գիւղը, սակայն նրանք ետ են շպրտուել ինքնապաշտպանական ջոկատների ուժերով: Յարձակմանը մասնակցել են խորհրդային բանակի զինծառայողները, ինչը խոստովանել է Անդրկովկասի զինտարածքի բարձրաստիճան ղեկավար Պատրիկէեւը: Նրա վկայութեամբ, գործողութեան ընթացքում վիրաւորուել է խորհրդային ռազմաօդային ուժերի մի օդաչու:

Խօսելով սահմանամերձ գօտու կացութեան մասին, Ա. Մանուչարեանն ասաց, որ Հայաստանի ՆԳ Նախարարութիւնը Ադրբեջանից հաղորդագրութիւն է ստացել, ըստ որի Գորիս-Սիսիանի գօտուց յարձակում է կատարուել Ադրբեջանի տարածքի վրայ: Կան ընպանուածներ, վիրաւորներ, մեծ գլխաքանակով ոչխարի հօտ է քշուել դէպի Հայաստան:

Կապանի տարածքը անընդհատ գնդակոծւում է չորրորդ բանակի կողմից: Եօթերորդ բանակի ղեկավարութիւնը խոստացել է այնտեղ տեղադրել ծանր տեխնիկա՝ հակահարուած տալու նպատակով: Համեմատաբար հանգիստ է հիւսիսային շրջաններում:

Հանդիպման աւարտին Ա. Մանուչարեանը յայտնեց, որ Հայաստանում տեղակայուած եօթերորդ բանակի հրամանատար Նիկոլայ Պիշչեւը, որին ինքը ճանաչում է որպէս պարկեշտ անձնաւորութեան, առաջիկայում փոխարինուելու է: